

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի կողմից 2017թ. առաջին կիսամյակում կատարված աշխատանքների մասին

Հանրային իրազեկումը Վայոց ձորի մարզպետարանի աշխատանքային ծրագրի մաս է կազմում և կոչված է հիմնականում լուսաբանելու այդ ծրագրի շրջանակներում իրականացվող միջոցառումները, գործընթացները և դրանց արդյունքում սպասվող ակնկալիքներն ու ձեռքբերումները:

2017 թվականի առաջին կիսամյակի ընթացքում մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժինը ղեկավարվելով բաժնի կանոնադրությամբ և բաժնին վերապահված գործառույթների, ինչպես նաև քաղաքացիական ծառայողների պաշտոնի անձնագրի պահանջներով՝ հաշվետու ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները.

ՏԵՂԵՎԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԱՅԼ ԿԱՅՔԵՐՈՎ ԵՎ ԶԼՄ-ՆԵՐՈՎ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ Վայոց ձորի մարզպետի և մարզպետարանի աշխատանքային գործունեության հանրային իրազեկումն ապահովելու նպատակով բաժինը հաշվետու ժամանակահատվածում համագործակցել է մարզային «Վարդաձոր», «ԱգրոԿամուրջ» ամսաթերթի, «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի և Վայոց ձորի թեմի պաշտոնական կայքի հետ:

ՏԵՂԵՎԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՅՔԷԶԻ «ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԲԱԺՆՈՒՄ ՏԵՂԱԴՐՎԱԾ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀՀ Վայոց ձորի մարզպետի և մարզպետարանի գործունեության հրապարակայնությանն են ուղղված եղել նաև պաշտոնական կայքի «Նորություններ» բաժնի նյութերը: Կայքի նորությունների բաժինը գրեթե ամեն օր թարմացվել է, որտեղ տեղ են գտել մարզպետարանի գործունեությունը լուսաբանող հաղորդագրությունները: 2017թ. 1-ին կիսամյակի ընթացքում մարզպետարանի պաշտոնական կայքի «Նորություններ» բաժնում տեղադրվել են 135 լուսաբանական նյութեր, որոնք եղել են լրատվական բնույթի հաղորդումներ, ուղերձներ, հայտարարություններ և իրազեկումներ:

Դրանք արտացոլել են մարզպետի աշխատանքային գործունեությունը, մարզպետի՝ մարզի տարբեր համայնքներում կատարած աշխատանքային այցերը, մարզպետի կողմից քաղաքացիների ընդունելությունները, մարզի համայնքներում առկա սոցիալ-տնտեսական իրավիճակը, տարբեր հիմնախնդիրների վերաբերյալ մարզպետարանում հրավիրված քննարկումները, կրթամշակութային անցուղարձը, ինչպես նաև

ՀՀ և օտարերկրյա պատվիրակությունների մարզ կատարած աշխատանքային այցերը, մարզպետի հանդիպումները հանրապետական և միջազգային տարբեր կազմակերպությունների կամ նրանց ներկայացուցիչների հետ և այլ բնույթի աշխատանքները:

Հաշվետու ժամանակահատվածում նշված բաժնում համապատասխան նյութերով համալրվել են <<Ելույթներ և հարցազրույցներ>>, <<Ուղերձներ>>, <<Մարզպետի պաշտոնական և աշխատանքային այցեր, ընդունելություններ>> ենթաբաժինները:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՅՔԷԶԻ ԱՅԼ ԲԱԺԻՆՆԵՐԻ ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Կիսամյակի ընթացքում մշտապես թարմացվել են Վայոց ձորի մարզպետարանի պաշտոնական կայքի 23 բաժիններն իրենց 125-ից ավելի ենթաբաժիններով:

Վայոց ձորի մարզպետարանի պաշտոնական կայքում պարտադիր հրապարակվել են ՀՀ ՎՁ մարզպետի ընդունած որոշումներն ու կարգադրությունները, մարզպետի, մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարների հաշվետվությունները:

Կայքում տեղադրվել են նաև մարզպետարանի գործունեության տարեկան ծրագրերը: 2017 թվականի առաջին կիսամյակի ընթացքում մարզի համայնքների ավագանիների կայացրած բոլոր նիստերի որոշումները (ընդհանուր թվով՝ 579) հրապարակվել են մարզպետարանի կայքում:

2017 թվականի առաջին կիսամյակի ընթացքում մարզպետարանում անց է կացվել մարզխորհրդի 1 նիստ, որի օրակարգը նախապես տեղադրվել է <<Նորություններ>> բաժնում, իսկ կայանալուց հետո նիստի օրակարգը և արձանագրությունը տեղադրվել են <<Մարզպետարան>> բաժնի <<Մարզխորհրդի նիստեր>> ենթաբաժնում:

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանում քաղաքացիների ընդունելության օրերի, վայրի և ժամի, ինչպես նաև դրանցում կատարվող փոփոխությունների մասին տեղեկությունները նախապես, իսկ կայանալուց հետո արդյունքների մասին տեղեկությունները հրապարակվել են պաշտոնական կայքի <<Նորություններ>> բաժնում: Նորությունների արխիվացումից հետո ամսական ընդունելության արդյունքները տեղադրվել է <<Քաղաքացիների ընդունելություն բաժնում>>:

Հանրային իրազեկում ապահովելու նպատակով մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժինը համագործակցել է զանգվածային լրատվության միջոցների, հասարակական կազմակերպությունների հետ: Կազմակերպվել են հարցազրույցները տարբեր լրատվամիջոցներով, ԶԼՄ-ների կողմից բարձրացրած հարցերին տրվել են սպառիչ պատասխաններ՝ ապահովելով՝ համապատասխան տեղեկատվությամբ:

Մարզպետարանի կայքում ըստ համապատասխան բաժինների և էջերի տեղադրվել են պարտադիր հրապարակման ենթակա ամբողջ տեղեկատվությունը, մարզպետարանի գործունեությանն առնչվող նորությունները:

Հաշվետու ժամանակահատվածում պաշտոնական կայքի բաժիններում անհրաժեշտաբար բացվել են նոր բաժիններ և ենթաբաժիններ.

<<Առցանց հեռարձակումներ>> և <<ՀՀ կառավարության աշխատակազմի ոլորտային պատասխանատուների հետ հետադարձ կապ հաստատելու կոնտակտային տվյալները>> բաժինները, ինչպես նաև <<Հանրակրթական հաստատությունների բյուջեների և կատարած ծախսերի հաշվետվություններ>> ենթաբաժինը՝ <<Տեղեկատվական կենտրոն>> բաժնում:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻՆ ՏՐՎԱԾ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Եղել են բազմաթիվ բանավոր հարցումներ, որոնք ուղղված են եղել մարզպետարանի աշխատակազմի տարբեր ստորաբաժանումներին, ինչպես նաև ստացվել են մարզպետարանում գործող **թեժ գծով (+374 281 2 25 57** հեռախոսահամարով):

Իսկ ՁԼՄ-ների և հասարակական կազմակերպությունների կողմից Վայոց ձորի մարզպետարանին արվել է 9 գրավոր հարցում, որոնց բոլորին օրենքով սահմանված ժամկետներում տրվել են պատասխաններ: Բոլոր հարցումները և պատասխանները տեղադրվել են մարզպետարանի պաշտոնական կայքի <<Դիմեք մեզ և տեղեկատվության ազատություն>> բաժնի <<Տեղեկատվություն ստանալու մասին հարցումների վիճակագրություն>> ենթաբաժնում:

Անպատասխան մնացած հարցումներ չկան:

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ՏՀԿ բաժնի պետ

Ս. Մարգարյան